

ՀԱՆԳԻՍՏ
Տ. ԼԵՒՈՆ Ա. ՔՀՆՅ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ
(1918-1999)

Տ. Լեւոն Ա. Քհնյ. Առաքելյան, աւագանի անունով՝ Հրանդ, ծնած է 13 Օգոստոս 1918-ին, Պաղատա, Ուրֆացի ծնողէ:

Տեղւոյն Թարգմանչաց մաթակաթարանը աւարտել ետք, 1932-ին կը մեկնի Երուսաղէմ, Ժառանգաւորաց վարժարանի որպէս աշակերտ:

Սարկաւագութեան աստիճան կը ստանայ 1936-ին, Թորգոմ Պատրիարք Գուշակեանի ձեռնով: Կը վերադառնայ իր ծննդավայրը, եւ կը հետեւի Լոնտոնի I.C.S. հարտաբապետութեան դասընթացներուն:

1948-ին, Միացեալ Նահանգաց առաջնորդ՝ Տիրան Արք. Ներսիսեանի հրաւերով կը փոխադրուի Ամերիկա: Կ'ընդունուի Ֆիլատելֆիոյ Temple University, ուրկէ 1953-ին շրջանաւարտ կ'ըլլայ, իսկ 1975-ին Նիւ Եորքի Peoples University of America համալսարանէն կը ստանայ Doctor of Humanities and Letters տիտղոսը:

1950-ին կ'ամուսնանայ կեսարահայ ընտանիքէ Ֆիլատելֆիա ծնած Կրէյս Մէշէնեանին հետ, ու կ'օրհնուին երեք զաւակներով՝ Հրանդ, Մելինէ եւ Արմէն:

Սեպտեմբեր 1950-ին Բահմայ կը ձեռնադրուի խարտաւիպկութեամբ Շնորհի վրդ. Գալուստեանի եւ ձեռնար Տիրան Արք. Ներսիսեանի, Ֆիլատելֆիոյ Ս. Նրորդուքիւն եկեղեցւոյ մէջ:

Հոգեւոր Հովիւ կը կարգուի Ֆիլատելֆիոյ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ եկեղեցիին, ուր կը ծառայէ մինչեւ 1963: Իրրեւ այցելուի Հովիւ նոյն ժամանակ կ'այցելէ Ուաշինկթըն եւ Ռիչմընտ քաղաքները: 1963-ին կը ստանձնէ Մայամիի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ հովուութեան պաշտօնը: 1964-ին կը հրաւիրուի Նիւ Եորք գլխաւորելու համար Ս. Վարդան Մայր Տաճարի եւ Կեդրոնի Յանձնախումբի աշխատանքները:

Արեւելեան Թեմի Առաջնորդ Տ. Մամբրէ Արք. Գալֆայեան անոր կը շնորհէ ծաղկեայ փիլոն կրելու իրաւունք: Իսկ Վեհ. Հայրապետը՝ Վազգէն Ա. 1968-ին Նիւ Եորքի Ուստօրֆ Ասօրիա պանդոկին մէջ տրուած օծման հաշկերոյթին՝ Տէր Լեւոն Բահմայի լանջախաչ կը շնորհէ:

1973-ին ան կը ստանձնէ հոգեւոր հովուութիւնը Քըմնէթիքթը Նահանգի Պրինսթօն քաղաքի: Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետը անոր կը շնորհէ Աւագ Բահմայի աստիճան: 1975-ին համայնքը հաշկերոյթով մը կը ընէ Տէր Հօր Բահմայակեան օծման 25-ամեակը:

1983-ին Տ. Լեւոն իր ընտանիքով կը փոխադրուի Արեւմտեան Թեմ ու կը ստանձնէ Սան Տիէյօի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ հովուութեան պաշտօնը: Այստեղ, երբ Տէր Հայրը մօր եկեղեցիի մը շինութեան ծրագրի իրականացումով կը զբաղէր, Փետրուար 1986-ին, արկածի մը հետեւանքով կը կորսնցնեն իրենց 64 տարեկան եւ երկու շաբթուան ամուսնացած Հրանդ զաւակը:

1987-ին Տէր Հայրը ամիսը երկու անգամ Սան Տիէյօնի Ֆինիքս Արքիօմա կը յաճախէր իրրեւ այցելուի հովիւ:

Տ. Լեւոն կազմակերպած է Ափփըր Ուեսթ Չեսթըրի համայնքը. մասն Հիւսթըն, Թէքսաս համայնքը:

1954-ին Թեմական Պատգամաւորական Ժողովէն ընտրուած է անդամ Թեմական Խորհուրդի եւ ծառայած է 14 երկար տարիներ:

1958-ին Փոխ-Ատեմնապետ, 1964-ին Ատեմնապետ Թեմական Պատգամաւորական Ժողովին. 1962-ին Թեմական Պատգամաւոր ընտրուած է մասնակցելու համար Ս. Միլոնի օրհնութեան՝ Էջմիածնայ մէջ. 1968-ին կազմակերպած է ուխտագնացութիւն մը դէպի Ս. Էջմիածին, Ս. Միլոնի օրհնութեան:

Տ. Լեւոն Ա. Քհնյ. Առաքելյան իր եղին աւանդեց 1999 Յունուար 18-ին, Սան Տիէյօի իր տան մէջ, եւ թաղման կարգը կատարուեցաւ Յունուար 21-22-ին Ս. Յովհաննէս եկեղեցւոյ մէջ, մախազահութեամբ Առաջնորդ Սրբազանին եւ հոգեւորականաց դասուն:

Տէրը Լուսաւորէ հոգին արժանաւոր իր սպասարին:

Ն. Ք.